


# ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԲԺԻՇԿԻ ՀԱՆՐՕԳՈՒՄ ԵՐԱԳԻՐԸ

Posted on November 14, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



### **Հարցազրույց՝ Լիբանանահայ Բժիշկ, Անեսթեզիոլոկ Պողոս Գարավերտեանի Հետ**

Համօ Մոսկոֆեան, Պէյրուօ, 12 Նոյեմբեր 2014

Բժիշկ Պողոս Գարավերտեանը Շրջանաւարտ է Երեւանի Պետական Բժշկական ինստիտուտից (1972): Մասնագիտացել է որպէս անեսթեզիոլոկ Երեւանի կլինիկական հիւանդանոցում, ապա ուսումը շարունակել է Պէյրուօի Ամերիկեան համալսարանում: 1979 թ.ին տեղափոխուել է «Սուրբ Գեորգ» հոշակաւոր հիւանդանոցը ուր պաշտօնավարում է մինչեւ այսօր:

#### **Համօ Մոսկոֆեան.- Կարո՞ղ էք ծանօթացել Յոյն և Ռուս-Ուղղափառ եկեղեցիների ջանքերով կառուցուած «Սուրբ Գեորգ» հոշակաւոր հիւանդանոցը:**

### **Հարցազրույց՝ Լիբանանահայ Բժիշկ, Անեսթեզիոլոկ Պողոս Գարավերտեանի Հետ**

Համօ Մոսկոֆեան, Պէյրուօ, 12 Նոյեմբեր 2014

Բժիշկ Պողոս Գարավերտեանը Շրջանաւարտ է Երեւանի Պետական Բժշկական ինստիտուտից (1972): Մասնագիտացել է որպէս անեսթեզիոլոկ Երեւանի կլինիկական հիւանդանոցում, ապա ուսումը շարունակել է Պէյրուօի Ամերիկեան համալսարանում: 1979 թ.ին տեղափոխուել է «Սուրբ Գեորգ» հոշակաւոր հիւանդանոցը ուր պաշտօնավարում է մինչեւ այսօր:

#### **Համօ Մոսկոֆեան.- Կարո՞ղ էք ծանօթացել Յոյն և Ռուս-Ուղղափառ եկեղեցիների ջանքերով կառուցուած «Սուրբ Գեորգ» հոշակաւոր հիւանդանոցը:**

**Դոկտ. Պողոս Գարավերտեան.-** Յոյն-Ուղղափառ եկեղեցւոյ և համայնքին պատկանող «Պալամանտ»ի համալսարանը ([University of Balamand](#)) և «[Սուրբ Գեորգ](#)» հիւանդանոցը 138-ամեայ պատմութիւն ունեն: Շինարարութեան ծախսերին օժանդակել է Մոսկուայի Ռուս-Ուղղափառ եկեղեցւոյ Պատրիարքը...: Հիւանդանոցի գլխաւոր տնօրէնը Պէյրուօի Մետրոպոլիտ Աուսէ եպիսկոպոսն է: Անշուշտ, այս կառուցը ղեկավարուում է ենթակայ գիտական և վարչական յանձնախմբերով: Այն կցուած լինելով համալսարանին՝ ունի իր վարչական և բժշկական տնօրէնութիւնը, ղեկավարուած բժշկական կոմիտէի ու տնօրէնի կողմից, որ բաղկացած է բժիշկներից: Իւրաքանչիւր 5 տարին ընտրուող բժշկական կոմիտէն պատասխանատու է գիտական, ուսումնական հոլովւյթի հետեւմանը:

#### **ՀՄ.-Ինչպէ՞ս կարելի է օգտակար լինել հայազգի հիւանդներին:**

**Դոկտ. ՊԳ.-** Այսօր, իմանալով որ Մայր Հայրենիքի “ներքին” և “արտաքին” Սփիւռքի հայ հիւանդները մեկնում են Եւրոպայի և Ամերիկայի հիւանդանոցներում բուժում ստանալու համար, շատ թանկ վճարելով բժշկական այդպիսի ծառայութիւններին, մտածեցի նման բուժումներ և վիրահատութիւններ կազմակերպել մեր մօտ, միջազգային բարձրագոյն մակարդակով և գրեթէ քառորդ գնով:

Մեր մասնագետները արեւմտա-եւրոպական և ամերիկեան բժշկական համալսարանների շրջանաւարտներ են, որոնք ընտրութիւնը որոշում է հիւանդանոցի կոմիտէն, քննարկումից յետոյ: Մի խօսքով՝ ժամանակակից ամէն ինչ ունենք այստեղ, բոլոր տեսակի բուժումներ, սկսած ուղեղից՝ մինչեւ հոգեբանական, սրտանօթային վիրահատութիւններ շատ յաջող կերպով կատարուում են:

Այսօր, Լիբանանի լաւագոյն 5 հիւանդանոցներից մէկն ենք: Պիզնեսային աշխարհ է և յաջողելու համար չենք ինսայում ոչ մի բան: Այսինքն՝ ինչ որ կայ բժշկական աշխարհում ունենք:

Միտք բանին ա՛յն է, որ կարենալ օգտակար լինել ի՛մ հային...: Ինչի՞ համար նա գնայ արտասահմաններ և շատ անելի թանկ վճարի բուժման համար: Նրանք, ովքեր ցանկանում են կապ հաստատել ինձ հետ և իմանալ հիւանդանոցի բուժումների գները՝ կարող են կապուել համացանցով՝ [drbkaravetian@gmail.com](mailto:drbkaravetian@gmail.com) հասցեով ու ես անմիջապէս կը պատասխանեմ:

Մնացեալ սոցիալական հարցերը, օդակայանից տեղափոխումը, հիւրանոցային կեցութիւնը, հեշտութեամբ կարող ենք կարգաւորել, այստեղի բարեխնամ հայերի (յատկապէս Երեւանի և Մոսկուայի հայրենակիցների) յատուկ ջանքերով: Արդէն Մերձաւոր Արեւելքի երկրներից ունենք բազմաթիւ հիւանդներ, որոնք գալիս, բուժուում և շարունակում են իրենց կեանքը:

**ՀՄ.- Որո՞նք են ձեր հետագայ ծրագրերը:**

**Դոկտ. ՊԳ.-** Ինչպէս ասուեց, որպէս մասնագետ բժիշկ, օգնել իմ հայ հիւանդին: Ապա որպէս ավագ բժիշկ--House physician կարող եմ ուրիշ հայ բժիշկներ էլ բերել այստեղ և մասնագիտացնել: Եթէ կարողացան իրենց գիտելիքները ապացուցել, այստեղ կ'ունենան կացարան, աշխատավարձ, բաւարար թոշակ և շատ լաւ մասնագիտանալուց յետոյ՝ կը վերադառնան: Մեր համալսարանը կապ ունի Ֆրանսիայի Թուլուզ քաղաքի ուսումնական կենտրոնների հետ: Մեր շրջանաւարտները այստեղ աւարտելուց յետոյ տեղափոխուում են Թուլուզ, շարունակելու իրենց ուսումը: Ապա որոշում են ո՛ր կողմ “թեքուել”: Մի մասը վերադառնում է, ուրիշներ նախընտրում են մնալ Եւրոպայում կամ անցնել Ամերիկա:

**ՀՄ.- Համեմատական կագով կարե՞լի է նշել մի յիշարժան պարագայ:**

**Դոկտ. ՊԳ.-** Ցանկանում եմ որպէս եզրակացութիւն փոխանցել մի յատկանշական դեպքի մասին:  Երբ հիւանդներից մէկի երկու ազդրոսկրները պետք է վիրահատէին և պրոտեզ (prosthesis) դրուէր Գերմանիայում 42,000 եւրոյի գումարով, մենք այստեղ, նոյն վիրահատութիւնը, լաւագոյն բժիշկներով ու պրոտեզներով կատարեցինք միայն 22,000 տոլարով: Այնպէս որ շատ անելի համեստ գներով կարելի է հիւանդին վերադարձնել կեանքն ու առողջութիւնը:

